





Ապրիլի 24-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Մեդրիի N սահմանապահ զորամասում տեղի ունեցած ոգեկոչման արարողությանը՝ նվիրված Եղեռնի 100-րդ տարելիցին

Ապրիլի 24-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը մասնակցել է Հայաստանի Հանրապետությունում գտնվող Ռուսաստանի Դաշնության Մեդրիի N սահմանապահ զորամասում տեղի ունեցած ոգեկոչման արարողությանը՝ նվիրված ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Միջոցառումը նշանավորվեց Մեդրիի սահմանապահների կողմից Մեծ եղեռնի նահատակներին նվիրված խաչքար-հուշակոթողի բացման արարողությամբ:

Անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշաքարի հեղինակն է Հ. Ղարախանյանը, քանդակագործ՝ Յ. Ավետիսյանը:

Միջոցառմանը ներկա էին հյուրեր, սպաներ, զինվորներ, ծառայողներ:

Ելույթ ունեցան զորամասի հրամանատար գնդապետ Ա. Կարչանովը, մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանը, Մեդրիի քաղաքապետ Ա. Հովհաննիսյանը, աշխատանքի վետերան Ս. Հովհաննիսյանը, թիվ 2 դպրոցի զինղեկ Ս. Դավթյանը, զորամասի դպրոցի ուսուցչուհի Լ. Բարիսովնան, հոգևոր հայր Ռաֆայելը:

Զորամասի հրամանատար գնդապետ Ա. Կարչանովը իր ելույթում նշեց, որ Օսմանյան Թուրքիայի հայահալած քաղաքականությունը կոտորածները հայերի նկատմամբ սկսվեցին դեռևս 19-րդ դարի վերջերից: 1915 թվականի ցեղասպանության օրերին ձերբակալվեցին 700 մտավորականներ, հասարակական գործիչներ: Արևմտահայությունը ցրվեց, սփռվեց

աշխարհի տարբեր կողմեր՝ Եվրոպա, Ամերիկա մերձավոր արևելք և այլն:

Սյունիքի փոխմարզպետ Վ. Գրիգորյանն իր պահանջատիրական խոսքում նշեց, որ ոչինչ չի մոռացվել և աշխարհից պահանջում ենք արդարություն:

Լ. Բարիսովնայի կատարմամբ հնչեց <<Ադանայի ողբը>> սգերգը:

Ելույթ ունեցողներն իրենց խորին երախտագիտությունը հայտնեցին խաչքար-հուշակոթողի հովանավորներին՝ զորամասի աշխատակազմին և Մեղրիի պատվավոր քաղաքացի Ա.

Գասպարյանին:

Մատուցվեց սուրբ պատարագ: Հոգևոր հայր Ռաֆայելը գինով օծեց խաչը, հայ ազգի փրկության համար աղոթքներ առ Աստված հղեց: